

Անձնագիր փոխանակելը

Անձնագիրը փոխանակելու համար քաղաքացին անձամբ ներկայանում է ԼՂՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանման անձնագրային ծառայություն, ներկայացնում փոխանակման ենթակա անձնագիրը, 35x45 մմ չափսի գունավոր երկու լուսանկար (եթե զինպարտ է՝ ներկայացնում է նաև զինվորական գրքույկը) և անձնագրի փոխանակման համար 1000 դրամի չափով վճարված պետական տուրքի անդորրագիր:

Քաղաքացու ներկայությամբ անձնագրային ծառայությունում լրացվում է թիվ 1 ձևի դիմումը, որտեղ նշվում են.

- անձնագրային գործողության տեսակը,
- դիմողի անունը, ազգանունը, հայրանունը,
- դիմողի ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը,
- ծննդյան երկիրը, քաղաքը, շրջանը, գյուղը
- դիմողի սեռը, ազգությունը,
- դիմողի բնակության վայրը,
- դիմողի ստորագրությունը,
- դիմումը կազմելու տարին, ամիսը ամսաթիվը:

Նոր անձնագիրը քաղաքացուն է տրվում 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Քաղաքացին անձնագրային ծառայությունից անձնագիրը ստանում է անձամբ կամ իր կողմից լիազորված անձի միջոցով: